Կարգապահական գործ թիվ ԿԳ-19002

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի հուլիսի 23-ի թիվ 169-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/110-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆԱՀԻՏ ՎԱՐԱԳՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Անահիտ Վարագյանին (արտոնագիր թիվ 360) **(այսուհետ նաև՝ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Անի Ավդալյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Պալատ հայտնել է, որ 2017թ. նոյեմբերին իր ընտանեկան հարցերի կարգավորման համար դիմել է փաստաբան Անահիտ Վարագյանին՝ իր փոխարեն դատարան հայցադիմում ներկայացնելու և դատարանում իր շահերը պաշտպանելու նպատակով: Մասնավորապես՝ ալիմենտի բռնագանձման, ամուսնու բնակարանից բաժնեմաս առանձնացնելու, որդու՝ Յան Ավդալյանի հայրության ճանաչման, ամուսնության ժամանակ իրեն նվիրված ոսկյա զարդերի բռնագանձման և ամուսնության ընթացքում իր անվամբ մոտ 1.000.000 ՀՀ դրամ արժողությամբ ապառիկ գնված կենցաղային իրերի գումարի վճարման պահանջով:

Դիմողը նաև հայտնել է, որ փաստաբան Անահիտ Վարագյանը դատարանում հայցադիմում ներկայացնելու և իր շահերը պաշտպանելու համար պահանջել ու պարբերաբար վճարման արդյունքում, ստացել է 80.000 ՀՀ դրամ և պայմանագիր չի կնքել: Միայն 2018թ.-ի հունիսին է Ա.Վարագյանը ներկայացրել հայցադիմում դատարան, իսկ հունիսի 21-ին դատարանից ստացել է նամակ, որում առկա էր հայցադիմում, որում նշված է եղել միայն երեխայի հայրության ճանաչման, ալիմենտի բռնագանձման պահանջ: Անահիտ Վարագյանը հայցադիմումը ներկայացրել է

դատարան 2018թ.-ի հունիսի 15-ին, որը դատարանի կողմից հետ է վերադարձվել իր հասցեի վերաբերյալ սխալ նշում կատարելու հիմքով: Դիմողը նաև հայտնել է, որ հայցադիմումը վերադարձվելուց հետո ինքը բազմիցս գանգահարել է Անահիտ Վարագյանին, վերջինս էլ հրաժարվել է հանդիպել իր հետ կամ հետ վերադարձնել իր գումարը կամ դրա մի մասը:

Դիմողը նաև նշել է, որ կատարածի վերաբերյալ հաղորդում է ներկայացրել և ՀՀ Ոստիկանության Արթիկի բաժնում նախապատրաստվել են նյութեր, որտեղ Անահիտ Վարագյանն ընդունել է, որ վերոնշյալ ծառայությունը մատուցելու համար իրենից առձեռն ստացել է 80.000 ՀՀ դրամ: ՀՀ Ոստիկանության Արթիկի բաժնի 30.07.2018թ. կայացված որոշմամբ իր հաղորդումը մերժվել է հանցակազմի բացակայության հիմքով:

Դիմողը խնդրել է փաստաբան Անահիտ Վարագյանի նկատմամբ միջոցներ ձեռնարկել և պարտավորեցնել հետ վերադարձնելու վճարած գումարը կամ դրա մի մասը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը</u>.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 25.01.2019թ. թիվ 26-Ա/ԿԳ-19002 որոշմամբ փաստաբան Անահիտ Վարագյանի (արտոնագիր թիվ 360) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 3.1.3 ենթակետի խախտման հատկանիշներով:

30.01.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռիմա Մխիթարյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

13.03.2019 թվականին Դիմողը ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է, որ 13.03.2019 թվականին փաստաբան Անահիտ Վարագյանից ստացել է 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ, որը վերջինիս տվել էր փաստաբանական ծառայություններ մատուցելու համար:

Դիմողը խնդրել է ՀՀ փաստաբանների պալատի կողմից հարուցված ԿԳ-19002 կարգապահական վարույթը կարճել, հայտնել է, որ փաստաբանից որևէ պահանջ չունի, քանի որ ստացել է վճարված գումարն ամբողջությամբ:

Դիմողը նաև նշել է, որ տեղեկացել է Անահիտ Վարագյանի հիվանդ լինելու փաստի վերաբերյալ, որի պատճառով նա չի կարողացել ծառայությունը մատուցել ժամանակին:

Դիմողը թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

23.01.2019 թվականին փաստաբան Անահիտ Վարագյանը ներկայացրել է բացատրություն,հայտնել է, որ իր համար անհասկանալի է դիմողի պահանջի իմաստը, երբ իր կողմից երբևէ, որևէ խոչընդոտ չի եղել լուծել իրենց միջև առկա տարաձայնությունները: Վերջինս նշել է, որ Անի Ավդալյանը իր մոտ եկել է 2018

թվականի մարտի վերջերին և 14.06.2018 թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան, որը 26.06.2018 թվականին դատարանի կողմից վերադարձվել է, իսկ այն կրկին ներկայացնելու ժամանակ Անի Ավդալյանն իրեն հայտնել է, որ ցանկանում է որոշ բաներ ավելացնել, իսկ մի քանի օր հետո ասել է, որ ալիմենտն իրեն ամենաքիչն է հետաքրքրում և չի ցանկանում այն հիմա ներկայացնել:

Փաստաբան Անահիտ Վարագյանը նաև հայտնել է, որ պայմանագիր չի կնքել, քանի որ պահանջները հստակեցնելու համար որոշ ժամանակ սպասել է, իսկ հետագայում Անի Ավդալյանը չի կարողացել գալ՝ պատճառաբանելով կամ երեխայով զբաղված լինելը կամ աշխատանքի մեջ լինելը:

Փաստաբան Անահիտ Վարագյանը նշել է նաև, որ Անի Ավդալյանը դիմել է ոստիկանություն, որտեղ ինքը տվել է բացատրություն, ուստի խնդրել է նշված բացատրությունը ընդունել նաև որպես այս Դիմումի բացատրություն:

25.03.2019 թվականին փաստաբան Անահիտ Վարագյանը ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է, որ ծառայությունների մատուցման պայմանագիր Անի Ավդալյանի հետ ի սկզբանե չի կնքել, քանի որ վերջինս չի հստակեցրել իր պահանջների չափը և չի ներկայացրել ապացույցներ իր կողմից ներկայացվեիք պահանջների վերաբերյալ: Երեխաների շահերից ելնելով, ինքն ալիմենտի և հայրության պահանջներով հայցադիմում է ներկայացրել դատարան, չսպասելով մյուս պահանջների հստակեցմանը, որը կարելի էր լրացնել նաև հետագայում: Փաստաբանը նշել է նաև, որ հայցադիմումը մուտքագրելուց հետո ոստիկանության Շիրակի մարզի Մարալիկի բաժնում ծանոթացել է Անի Ավդալյանի մնացած պահանջների վերաբերյալ կազմված նյութերին և տեսնելով ու համոզվելով, որ որևէ ապացույց չկա ոսկեղենի և այլ գույքային պահանջներ ներկայացնելու համար հայտնել է Անիին, որ վերջինս անհապաղ պետք է ներկայանա գրասենյակ պայմանագիրը հաստատելու և բնակության իրավունքով այլ պահանջ ներկայացնելու համար, սակայն Անին այլևս գրասենյակ չի ներկայացել, դեռ ավելին սկսել է բողոքներն, իր համար բոլորովին անհասկանաի պատճառներով.:

Փաստաբանը կրկին նշել է, որ բարեխղճորեն կատարել է աշխատանքը, իսկ պայմանագիրը չի կնքվել Անի Ավդալյանի չներկայանալու պատճառով:

Պատասխանողը թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

29.03.2019թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ՝ Նարինե Սարգսյանը կազմել է եզրակացություն

08.04.2019թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2019 թվականի հուլիսի 23-ին, ժամը՝ 19:15-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ

կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. 2017 թվականի նոյեմբերին Դիմողը դիմել է փաստաբան Անահիտ Վարագյանին:

2. Դիմողը փաստաբան Անահիտ Վարագյանին վճարել է 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ:

3. Դիմող Անի Ավդալյանի և Պատասխանող փաստաբան Անահիտ Վարագյանի միջև փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր չի կնքվել:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Դիմողի կողմից ներկայացված դիմումով, Պատասխանողի բացատրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Անահիտ Վարագյանի (արտոնագիր 360, ստացված՝ 16.03.1999թ.) նկատմամբ 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում 1 անգամ հարուցվել է կարգապահակն վարույթ (չհաշված Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 25.01.2019թ. թիվ 26-Ա/ԿԳ-19002), վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով, որը կարճվել է՝ արտոնություն կիրառելու հիմքով:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Անահիտ Վարագյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 3.1.3 ենթակետի համաձայն՝ *Գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:*

Կանոնագրքի 3.1.3 կետի շարադրանքից հետում է, որ գրավոր պայմանագիր կնքելու պարտականությունը դրվում է Պատասխանողի վրա: Խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանողը բացատրությամբ հայտնել է որ իր և Դիմողի միջև չի կնքվել գրավոր պայմանագիր: Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ Դիմողի և Պատասխանողի միջև փաստաբանական ծառայությունների մատուցման գրավոր պայմանագիր չի կնքվել: Միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ Դիմողի կողմից ներկայացրած բացատրությամբ

հիմնավորվում է այն հանգամանքը, որ Դիմողն իրավաբանական օգնություն ստանալու համար դիմել է Պատասխանողին դեռևս 2017 թվականի նոյեմբերին՝ չհստակեցնելով օրը, և Պատասխանողի կողմից պայմանագիր կնքելու պարտականությունը ծագել է հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից, որը պետք է կատարվեր երկու ամսվա ընթացքում՝ մինչև 2018թ. հունվարի 31-ը: Մինչդեռ Դիմողը Պալատ դիմում է ներկայացրել 25.12.2018 թվականին , սակայն պետք է ներկայացներ կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, այն է՝ մինչև 31.07.2018 թվականին:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39.3 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման: Կարգապահական վարույթ հարուցվելու օրվանից սույն մասով նախատեսված վաղեմության ժամկետը կասեցվում է:

Նշված իրավական նորմով նախատեսված է փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը: Դա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում փաստաբանի վստահորդը կամ այլ իրավասու անձ կարող է Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման հիմքով ներկայացնել հաղորդում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

Նշված ժամկետն անցնելը (այդ ժամկետի ընթացքում կարգապահական վարույթ հարուցելու հաղորդում (դիմում) չներկայացնելը) շահագրգիռ անձի համար առաջ է բերում անբարենպաստ իրավական հետևանքներ, այն առումով, որ նույնիսկ կարգապահական պատասխանատվության հիմքի առկայության (փաստաբանին վերագրվող արարքը հաստատվելու) պարագայում Օրենքի իմպերատիվ պահանջից ելնելով փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել չի կարող, իսկ այն հարուցման դեպքում ենթակա է կարճման:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ «Փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում՝ երբ անցել են սույն օրենքով նախատեսված վաղեմության ժամկետները:

Խորհուրդն արձանագրում է, որ թեև Պատասխանողի կողմից չի կնքվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր, որպիսի վարքագիծը հակասում է Կանոնագրքի 3.1.3 ենթակետի պահանջներին, սակայն նկատի ունենալով, որ Դիմողը բաց է թողել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար սահմանված վաղեմության ժամկետը սույն կարգապահական վարույթը ենթակա կարճման:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 39.8. հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Անահիտ Վարագյանի (արտոնագիր թիվ 360) նկատմամբ Կանոնագրքի 3.1.3 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-19002 կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյան

23 հուլիսի 2019թ.
թիվ ԿԳ/110-Ա
ք. Երևան